

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին

ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է արտոնագրային վճարի հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանում է վճարողների շրջանակը, արտոնագրային վճարի չափը և վճարման կարգը:

Հոդված 2. Արտոնագրային վճարի հասկացությունը

1. Արտոնագրային վճարը սույն օրենքով սահմանված չափերով և ժամկետներում սույն օրենքով նախատեսված գործունեություն իրականացնող ֆիզիկական անձի (այդ թվում՝ անհատ ձեռնարկատիրոջ) համար ավելացված արժեքի հարկին, իսկ իրավաբանական անձի համար շահութահարկին և (կամ) ավելացված արժեքի հարկին (այսուհետ՝ ԱԱՀ) փոխարինող պետական բյուջե մուծվող պարտադիր և անհատույց վճար է:

2. Իրավաբանական անձանց համար արտոնագրային վճարի գումարի մեջ ԱԱՀ-ի հաշվարկային մեծությունն ընդունվում է 60 տոկոսի չափով:

(2-րդ հոդվածը լրաց. 07.12.11 ՀՕ-314-Ն, փոփ. 19.12.12 ՀՕ-243-Ն)

Հոդված 3. Հարկային արտոնությունների կասեցումը

Արտոնագրային վճար վճարողների համար սույն օրենքով կարգավորվող հարաբերությունների մասով կասեցվում են շահութահարկի և ԱԱՀ-ի գծով հարկային օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնությունները:

(3-րդ հոդվածը լրաց. 07.12.11 ՀՕ-314-Ն, փոփ. 19.12.12 ՀՕ-243-Ն)

Հոդված 4. Արտոնագրային վճար վճարողները

1. Հայաստանի Հանրապետությունում արտոնագրային վճար վճարող են համարվում, բացառությամբ սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված դեպքում, իրենց հաշվառման (բնակության, գործունեության իրականացման) վայրի հարկային մարմիններին սույն օրենքով սահմանված ժամկետներում ու կարգով դիմում-հայտարարություն ներկայացրած և սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված պայմանները բավարարող՝

1) բացառապես սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելված N 1-ում ընդգրկված գործունեության տեսակներ իրականացնող ֆիզիկական անձինք, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերը:

2)(կեսն ուժը կորցրել է 19.12.12 ՀՕ-243-Ն)

1.1. Սույն օրենքի անբաժանելի մասը կազմող N 7 հավելվածով սահմանված գործունեության տեսակներ իրականացնողները համարվում են արտոնագրային վճար վճարողներ՝ հաշվի առնելով սույն հոդվածի 1.2-րդ մասի պահանջները: Սույն օրենքի N 7 հավելվածով սահմանված գործունեության տեսակների համար արտոնագրային վճարի հարկման օբյեկտները, արտոնագրային վճարի հաշվարկման ու վճարման կարգը և ժամկետները սահմանվում են սույն օրենքի անբաժանելի մասը կազմող N 8 հավելվածով:

1.2. Առևտրի իրականացման վայրերում (ոսկու շուկաներ) վաճառատեղանների կամ վաճառակետերի միջոցով թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի կամ թանկարժեք քարերի առքուվաճառքի գործունեություն իրականացնողները՝ տարեկան մինչև 115 մլն դրամ իրացման շրջանառությամբ, որոնք, օրենքի համաձայն, համարվում են շրջանառության հարկ վճարողներ, սույն օրենքի 8-րդ հավելվածով սահմանված հայտարարություն ներկայացնելու դեպքում համապատասխան գործունեության մասով համարվում են արտոնագրային վճար վճարողներ:

2. Արտոնագրային վճար վճարող կարող են համարվել այն ֆիզիկական անձինք, որոնց կողմից նախորդ տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով

մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների (բացառությամբ՝ որպես վարձու աշխատող կատարած աշխատանքների), ինչպես նաև վարձավճարների իրացման շրջանառության ընդհանուր գումարը (առանց ԱԱՀ-ի) չի գերազանցել 9,0 մլն դրամը:

3. Արտոնագրային վճար վճարողներ չեն կարող համարվել այն ֆիզիկական անձինք՝

1) որոնք իրենց գործունեության իրականացման համար օգտագործում են անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այլ ֆիզիկական անձանց աշխատանքը.

2) *(կետն ուժը կորցրել է 19.12.12 ՀՕ-243-Ն)*

3) *(կետն ուժը կորցրել է 19.12.12 ՀՕ-243-Ն)*

4) որոնք հանդիսանում են համատեղ գործունեության պայմանագրի (բացառությամբ գուղատնտեսական արտադրանքի արտադրության) կողմ.

5) *(կետն ուժը կորցրել է 19.12.12 ՀՕ-243-Ն)*

6) որոնց գործունեությունը (բացառությամբ՝ իր բնույթով պայմանավորված իրականացման մշտական վայր չունեցող գործունեության տեսակների) իրականացվում է մեկից ավելի վայրում.

7) որոնք արտոնագրային վճար վճարող համարվելու համար հարկային տեսչություն դիմում-հայտարարություն ներկայացնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հանդեպ ունեն 100 հազար և ավելի դրամը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ (այդ թվում՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարը):

4. Սույն օրենքի իմաստով վայր չեն համարվում ֆիզիկական անձի գտնվելու և (կամ) կառավարման որոշումների ընդունման վայրերը, եթե դրանցում չեն իրականացվում սույն օրենքի հավելվածներով սահմանված գործունեության տեսակները:

5. Սույն օրենքի 5-8-րդ հոդվածների դրույթները չեն տարածվում սույն օրենքի N 7 հավելվածով սահմանված գործունեության տեսակներ իրականացնող արտոնագրային վճար վճարողների նկատմամբ:

(4-րդ հոդվածը լրաց. 07.12.11 ՀՕ-314-Ն, փոփ. 19.12.12 ՀՕ-243-Ն, լրաց. 19.06.15 ՀՕ-67-Ն)

Հոդված 5. Արտոնագրային վճար վճարող համարվելու համար դիմում-հայտարարություն ներկայացնելը և հաշվառվելը

1. Սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված պայմանները բավարարող ֆիզիկական անձինք տվյալ տարվա որևէ ժամանակահատվածի (օրացուցային տարվա ընթացքում ընտրված ցանկացած ամիս կամ հաջորդական ամիսների հանրագումար, բայց ոչ ավելի, քան մինչև տվյալ օրացուցային տարվա ավարտը) համար՝ մինչև գործունեություն իրականացնելը, իսկ գործունեության տվյալ տեսակի համար համապատասխան արտոնագիր ունեցող ֆիզիկական անձինք՝ մինչև նախկին արտոնագրով նախատեսված ժամանակահատվածից հետո գործունեության տվյալ տեսակը շարունակելը արտոնագրային վճար վճարող համարվելու համար իրենց հաշվառման (բնակության, գործունեության իրականացման) հարկային մարմին են ներկայացնում սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելված N 3-ում սահմանված ձևով դիմում-հայտարարություն, որտեղ նշում են՝

1) արտոնագրային վճար վճարողի՝

ա. անունը և ազգանունը,

բ. անձնագրային տվյալները,

գ. սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում).

դ. անհատ ձեռնարկատեր համարվող ֆիզիկական անձի հարկ վճարողի հաշվառման համարը (այսուհետ՝ ՀՎՀՀ).

2) արտոնագրային վճարով հարկվող գործունեություն իրականացնելու ժամանակահատվածը.

3) գործունեության իրականացման՝

ա. տեսակը (տեսակները),

բ. վայրը (բացառությամբ՝ իր բնույթով պայմանավորված իրականացման մշտական վայր չունեցող գործունեության տեսակների):

Արտոնագրային վճար վճարող համարվելու համար դիմում-հայտարարություն ներկայացնելու ամսաթիվը ներառող ամիսն ընդունվում է որպես ամբողջական ամիս՝ անկախ դիմում-հայտարարությունը ներկայացնելու ամսաթվից:

2. *(մասն ուժը կորցրել է 19.12.12 ՀՕ-243-Ն)*

3. Դիմում-հայտարարություն ներկայացրած անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին տրվում է ՀՎՀՀ «Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հարկային

հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

4. ՀՎՀՀ տրամադրելու օրն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը հաշվառվում է հարկային մարմնում որպես արտոնագրային վճար վճարող և ստանում է սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելված N 5-ում սահմանված ձևի արտոնագիրը: Ընդ որում, «Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետներում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց ՀՎՀՀ տրամադրելու օրվա ընթացքում սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելված N 5-ով սահմանված ձևի արտոնագիր չտրամադրելու դեպքում արտոնագիրը համարվում է տրամադրված ՀՎՀՀ տրամադրելու օրը, եթե անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը, սույն օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան, կատարել է արտոնագրային վճարի վճարում, բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքերի:

Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ արտոնագրային վճարից ազատված գործունեության մասով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին արտոնագիրը տրամադրվում է սույն մասով սահմանված կարգով՝ առանց արտոնագրային վճարի վճարման:

5. Դիմում-հայտարարություն ներկայացնելու օրն անհատ ձեռնարկատերը հաշվառվում է հարկային մարմնում որպես արտոնագրային վճար վճարող և ստանում է սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելված N 5-ում սահմանված ձևի արտոնագիրը: Ընդ որում, դիմում-հայտարարությունը ներկայացնելու օրվա ընթացքում սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելված N 5-ով սահմանված ձևով արտոնագիր չտրամադրելու դեպքում արտոնագիրը համարվում է տրամադրված դիմում-հայտարարությունը ներկայացնելու օրը, եթե անհատ ձեռնարկատերը, սույն օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան, կատարել է արտոնագրային վճարի վճարում, բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքերի:

Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ արտոնագրային վճարից ազատված գործունեության մասով անհատ ձեռնարկատիրոջը արտոնագիրը տրամադրվում է սույն մասով սահմանված կարգով՝ առանց արտոնագրային վճարի վճարման:

6. Յուրաքանչյուր ֆիզիկական անձին յուրաքանչյուր ժամանակահատվածի համար տրվում է մեկ արտոնագիր:

7. Որևէ ժամանակահատվածի համար արտոնագիր ստացած ֆիզիկական անձին այդ ժամանակահատվածը ամբողջությամբ կամ մասնակի ներառող ժամանակահատվածի համար նոր արտոնագիր չի տրամադրվում:

(5-րդ հոդվածը լրաց. 22.06.12 ՀՕ-166-Ն, փոփ., լրաց. 19.12.12 ՀՕ-243-Ն, լրաց. 19.11.14 ՀՕ-188-Ն)

Հոդված 6. Արտոնագրային վճարի հարկման օբյեկտը և չափը

1. Արտոնագրային վճարի հարկման օբյեկտ են համարվում սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելված N 1-ում ընդգրկված գործունեության տեսակները, որոնց իրականացման արդյունքում ֆիզիկական անձն ստացել է կամ նպատակ է ունեցել ստանալ եկամուտ:

2. Գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով արտոնագրային վճարի ամսական չափը հաշվարկվում է սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելված N 1-ով սահմանված արտոնագրային վճարի ամսական չափի և սույն հոդվածի 2.1-ին մասով սահմանված գործակցի արտադրյալով՝ դրամական արտահայտությամբ:

2.1. Արտոնագրային վճարի մեկ ամսվա չափի հաշվարկման համար սահմանվում է 1,0 գործակից: Մեկ ամսից ավելի ժամանակահատվածի համար արտոնագրային վճարի չափը հաշվարկելիս երկրորդ և հետագա ամիսների համար գործակիցը որոշվում է՝ նախորդ ամսվա համար որոշված գործակիցը նվազեցնելով 0,02 թվով:

3. Գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով մեկ ամսից ավելի որևէ ժամանակահատվածի համար արտոնագրային վճարի չափը հաշվարկվում է տվյալ ժամանակահատվածում ներառված յուրաքանչյուր ամսվա համար սույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան որոշվող արտոնագրային վճարի ամսական չափերի հանրագումարով:

3.1. (մասն ուժը կորցրել է 19.12.12 ՀՕ-243-Ն)

4. Ընթացիկ տարում սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը գերազանցելու, ինչպես նաև սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կամ 3-րդ մասերով սահմանված

պայմաններին չբավարարելու դեպքում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող արտոնագրային վճար վճարող ֆիզիկական անձինք՝

1) դադարում են համարվել արտոնագրային վճար վճարող և այդ պահից մինչև ընթացիկ տարվա վերջը չեն կարող հանդիսանալ արտոնագրային վճար վճարող.

2) այդ պահից մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար հարկերը հաշվարկում և վճարում են անհատ ձեռնարկատերերի համար օրենքով սահմանված ընդհանուր կարգով՝ այդ չափը գերազանցող մասով (բացառությամբ՝ հաշվեգրման եղանակով եկամուտների հաշվարկման և հարկային վնասների փոխանցման դրույթների):

5. Ընթացիկ տարում սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը գերազանցելու, ինչպես նաև սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կամ 3-րդ մասերով սահմանված պայմաններին չբավարարելու դեպքում արտոնագրային վճար վճարող անհատ ձեռնարկատերերը՝

1) դադարում են համարվել արտոնագրային վճար վճարող և այդ պահից մինչև ընթացիկ տարվա վերջը չեն կարող հանդիսանալ արտոնագրային վճար վճարող.

2) այդ պահից մինչև ընթացիկ տարվա վերջը ընկած ժամանակահատվածի համար հարկերը հաշվարկում և վճարում են օրենքով սահմանված ընդհանուր կարգով՝ այդ չափը գերազանցող մասով:

6. Ընթացիկ տարում արտոնագրային վճար վճարող հանդիսանալուց դադարելու դեպքում սույն օրենքով սահմանված կարգով վճարված արտոնագրային վճարները չեն հաշվանցվում տվյալ տարվա եկամտային հարկի և (կամ) ԱԱՀ-ի գումարներից և չեն վերադարձվում (անկախ նրանից, թե որ ժամանակահատվածի համար է վճարվել արտոնագրային վճարը), ինչպես նաև հաշվի չեն առնվում արտոնագրային վճար վճարող համարվելու ժամանակաշրջանում ձեռքբերումների գծով կատարված ծախսերը և վճարված (վճարվող) ԱԱՀ-ի գումարները:

(6-րդ հոդվածը լրաց. 22.06.12 ՀՕ-166-Ն, փոփ., խմբ., լրաց. 19.12.12 ՀՕ-243-Ն)

Հոդված 7. Արտոնագրային վճար վճարողների կողմից հաշվարկային փաստաթղթերի դուրսգրումը, այլ հարկերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների վճարումը

1. Արտոնագրային վճար վճարողները հարկային հաշիվներ դուրս չեն գրում:

2. Արտոնագրային վճար վճարողները չեն հանդիսանում հարկային գործակալներ՝ արտոնագրային վճար վճարողներից եկամուտներ ստացած ֆիզիկական անձանց վրա տարածվում են «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթները:

3. *(մասն ուժը կորցրել է 19.12.12 ՀՕ-243-Ն)*

4. Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող արտոնագրային վճար վճարողների կողմից կազմակերպություններին, արտոնագրային վճար վճարող չհանդիսացող անհատ ձեռնարկատերերին և նոտարներին ծառայություններ մատուցելու դեպքում վերջիններս, որպես հարկային գործակալ, եկամտի վճարման աղբյուրի մոտ եկամտային հարկը պահում (գանձում) են «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

5. *(մասն ուժը կորցրել է 19.12.12 ՀՕ-243-Ն)*

6. Արտոնագրային վճար վճարողների վրա այդպիսին համարվելու հաշվետու ժամանակաշրջանում սույն օրենքով կարգավորվող հարաբերությունների մասով չեն տարածվում «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածով սահմանված դրույթները:

7. Արտոնագրային վճար վճարողները հարկային մարմիններ օրենսդրությամբ սահմանված հաշվետվություններ (հաշվարկներ, հայտարարագրեր, տեղեկություններ) չեն ներկայացնում:

(7-րդ հոդվածը փոփ., խմբ. 19.12.12 ՀՕ-243-Ն)

Հոդված 8. Արտոնագրային վճարի վճարման կարգը և ժամկետները

Արտոնագրային վճար վճարողներն արտոնագրային վճարը վճարում են արտոնագիրն ստանալիս:

(8-րդ հոդվածը փոփ. 19.12.12 ՀՕ-243-Ն)

Հոդված 9. Սույն օրենքի խախտման համար պատասխանատվությունը

1. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված պայմանը խախտելու դեպքում արտոնագրային վճար վճարողները կրում են չգրանցված վարձու աշխատող պահելու դեպքում գործատուների համար օրենքով սահմանված պատասխանատվությունը:

2. Հայաստանի Հանրապետությունում հսկիչ-դրամարկղային մեքենաների պարտադիր կիրառմամբ գործունեություն իրականացնող արտոնագրային վճար վճարող անհատ ձեռնարկատերերը հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելու դեպքում կրում են օրենքով սահմանված պատասխանատվությունը:

3. Սույն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկությունները հարկային մարմիններ չներկայացնելու դեպքում արտոնագրային վճար վճարողները կրում են տեղեկությունները հարկային մարմիններ չներկայացնելու համար օրենքով սահմանված պատասխանատվությունը:

4. Արտոնագրային վճար վճարողի կողմից՝ տվյալ արտոնագրում չնշված և սույն օրենքի N 1 հավելվածում նշված գործունեության տեսակով (տեսակներով) զբաղվելու դեպքում արտոնագրային վճար վճարողից գանձվում է գործունեության այդ տեսակի (տեսակների) և ժամանակահատվածի համար սույն օրենքով սահմանված արտոնագրային վճարը՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով և չափով հաշվարկված տույժերի հետ միասին, բացառությամբ սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքերի:

5. Անհատ ձեռնարկատեր հանդիսացող արտոնագրային վճար վճարողի կողմից սույն օրենքի N 1 հավելվածում չնշված գործունեության տեսակով (տեսակներով) զբաղվելու փաստը հարկային մարմնի կողմից արձանագրվելու դեպքում անհատ ձեռնարկատերերն այդ գործունեությամբ զբաղվելու պահից մինչև ընթացիկ տարվա վերջն ընկած ժամանակահատվածի համար հարկերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները հաշվարկում և վճարում են օրենքով սահմանված ընդհանուր կարգով՝ հաշվի առնելով սույն օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դրույթները:

6. Սույն օրենքի անբաժանելի մաս համարվող N 7 հավելվածում նշված գործունեության տեսակների մասով գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի արտոնագրում նշված արտոնագրային վճարի ելակետային տվյալի մեծությունը հարկային մարմնի կողմից արձանագրված ելակետային տվյալի մեծությունից պակաս լինելու և (կամ) օրենքի անբաժանելի մաս համարվող N 8 հավելվածի 14-րդ կետով սահմանված համապատասխան գործակիցներից ցածր գործակիցներ կիրառելու դեպքերում արտոնագրային վճար վճարողից գանձվում են տվյալ ժամանակահատվածի համար պակաս վճարված արտոնագրային վճարը և տուգանք՝ պակաս վճարված արտոնագրային վճարի 50 տոկոսի չափով, բացառությամբ սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքերի: Հարկային մարմնի կողմից խախտումն արձանագրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, նույն գործունեության տեսակի գծով նույն խախտումը թույլ տալու դեպքերում արտոնագրային վճար վճարողից գանձվում են տվյալ ժամանակահատվածի համար պակաս վճարված արտոնագրային վճարը և տուգանք՝ պակաս վճարված արտոնագրային վճարի գումարի չափով, բացառությամբ սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքերի: Սույն մասով սահմանված պատասխանատվությունը կիրառվում է այն բոլոր ժամանակահատվածների համար, որին վերաբերող արտոնագրերում նշված ելակետային տվյալը և (կամ) գործակիցը պակաս է հարկային մարմնի կողմից արձանագրված՝ համապատասխան ժամանակահատվածի համար օրենքին համապատասխան որոշվող ելակետային տվյալի մեծությունից և (կամ) գործակիցից: Սույն մասով սահմանված պատասխանատվության կիրառման համար խախտումը կատարելու ժամանակահատվածի որոշման անհնարինության դեպքում տվյալ ժամանակահատվածն ընդունվում է ոչ պակաս, քան երեք ամիսը:

7. Իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից առանց արտոնագրի գործունեության իրականացման տվյալ վայրում սույն օրենքի N 7 հավելվածում նշված գործունեության տեսակով (տեսակներով) զբաղվելու դեպքում իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք՝ առանց արտոնագրի գործունեությունը փաստացի իրականացնելու ժամանակահատվածի (բայց ոչ պակաս երեք ամսվա) համար սույն օրենքի N 8 հավելվածով սահմանված կարգով հաշվարկված՝ վճարման ենթակա արտոնագրային վճարի կրկնակի չափով, բացառությամբ սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքերի: Ընդ որում, սույն մասով սահմանված տուգանքի հաշվարկման համար սույն օրենքի N 8 հավելվածի 14-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված գործակիցները հաշվի չեն առնվում:

Սույն օրենքի N 8 հավելվածի 5-րդ կետի երրորդ պարբերությանը համապատասխան՝ հանդիսությունների, արարողությունների կամ համանման այլ

միջոցառումների կազմակերպման համար նախատեսված սրահի համար ստացված արտոնագրերում չնշված որևէ օրվա ընթացքում գործունեություն իրականացնելու համար իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից արտոնագրում չնշված՝ գործունեության իրականացման յուրաքանչյուր օրվա համար գանձվում է արտոնագրային վճար՝ սույն օրենքի N 8 հավելվածով սահմանված կարգով մեկամսյա ժամանակահատվածի համար տվյալ վայրի մասով հաշվարկված արտոնագրային վճարի չափով, բացառությամբ սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքերի:

8. Սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված կարգով հաշվարկված արտոնագրային վճարները և տուգանքները պետական բյուջե են վճարվում հարկային մարմնի կողմից համապատասխան ակտ ներկայացնելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

9. Սույն օրենքի N 7 հավելվածում նշված գործունեության տեսակով (տեսակներով) զբաղվելու դեպքում արտոնագրային վճարը սույն օրենքի N 8 հավելվածով սահմանված ժամկետում չվճարելու դեպքում (բացառությամբ «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի) կիրառվում է «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով սահմանված պատասխանատվությունը՝ գործունեության իրականացման ժամանակահատվածի առաջին օրվանից սկսած:

10. «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ արտոնագրային վճարից ազատված գործունեության տեսակների մասով սույն հոդվածի 4-րդ, 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված խախտումները կատարած անձանց նկատմամբ կիրառվում է նախազգուշացում: Հարկային մարմնի կողմից խախտումն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, արտոնագրային վճարից ազատված գործունեության տեսակների մասով սույն հոդվածի 4-րդ, 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված խախտումները կատարելու դեպքերում արտոնագրային վճարից ազատված գործունեություն իրականացնող անձինք հարկային մարմնի կողմից խախտումն արձանագրվելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 1-ից դադարում են օգտվել «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ արտոնագրային վճարից ազատման արտոնությունից, և գործունեության այդ տեսակի մասով արտոնագրային վճարը հաշվարկվում է սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

(9-րդ հոդվածը փոփ., լրաց. 07.12.11 ՀՕ-314-Ն, խմբ., լրաց. 22.06.12 ՀՕ-166-Ն, փոփ., խմբ., լրաց. 19.12.12 ՀՕ-243-Ն, լրաց. 19.11.14 ՀՕ-188-Ն)

Հոդված 10. Օրենքի վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերը

Սույն օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերն ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունների հետ:

Հոդված 11. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-247-Ն օրենքը:

**Հայաստանի Հանրապետության
Նախագահ**

Ս. Սարգսյան

2010 թ. դեկտեմբերի 28
Երևան
ՀՕ-209-Ն

Հավելված N 1
«Արտոնագրային վճարների մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ԿՃԱՐ ԿՃԱՐՈՂ ՀԱՍԱՐԿԵԼՈՒ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ԿՃԱՐՆԵՐԻ ԱՄՍԱԿԱՆ ԶԱՓԵՐԻ**

| NN | Գործունեության տեսակները | Արտոնագրային վճարի ամսական չափը՝ ըստ բնակավայրերի (դրամ) | | | | |
|------|---|--|----------------|--------------|---------------------|------------|
| | | քաղաք-երևան | մարզկենտրոններ | այլ քաղաքներ | սահմանամերձ գյուղեր | այլ վայրեր |
| 1. | Բնակչության պատվերով կատարվող՝ | 6500 | 2500 | 2000 | 300 | 1000 |
| 1.1 | կոշիկի և կաշվե գալանտերեայի և համանման այլ արտադրատեսակների արտադրություն, կոշիկի և կաշվե գալանտերեայի պարագաների արտադրություն, կոշիկի և կաշվե արտադրատեսակների նորոգում | | | | | |
| 1.2 | հագուստի արտադրություն և նորոգում | | | | | |
| 1.3 | գլխարկների արտադրություն և նորոգում | | | | | |
| 1.4 | գորգերի և գորգագործական արտադրատեսակների արտադրություն և նորոգում | | | | | |
| 1.5 | փայտյա իրերի պատրաստում, կահույքի և տան կահավորանքի նորոգում | | | | | |
| 1.6 | ոչ թանկարժեք զարդերի արտադրություն և նորոգում | | | | | |
| 1.7 | համակարգչային տեխնիկայի, հեռուստացույցների, լվացքի մեքենաների, օդորակիչների և այլ կենցաղային տեխնիկայի նորոգում, ծրագրային սպասարկում | | | | | |
| 1.8 | հեծանիվների և հաշմանդամների սայլակների արտադրություն, անձնական օգտագործման և կենցաղային այլ արտադրատեսակների նորոգում | | | | | |
| 1.9 | տնտեսական և գեղագարդ խեցեգործական արտադրատեսակների արտադրություն | | | | | |
| 1.10 | այլ ձենապակե և խեցեգործական արտադրատեսակների արտադրություն | | | | | |
| 1.11 | թիթեղագործական գործունեություն | | | | | |
| 2. | Ժամացույցների, ժամանակաչափ սարքերի նորոգում, երաժշտական գործիքների նորոգում | 6500 | 2500 | 2000 | 300 | 1000 |
| 3. | Նեղ մասնագիտական գիտելիքների ձեռքբերման այլ դասընթացներ | 6500 | 2500 | 2000 | 300 | 1000 |
| 4. | Լեզուների ուսուցման դասընթացներ | 10000 | 4000 | 3000 | 400 | 1500 |
| 5. | Բարձրագույն և այլ հաստատություններ ընդունվելու համար նախապատրաստական դասընթացներ | 15000 | 5000 | 4000 | 600 | 2000 |
| 6. | Պարեր, երգեցողություն դասավանդողների գործունեություն | 6500 | 2500 | 2000 | 300 | 1000 |
| 7. | Կատարողական արվեստի բնագավառում գործունեություն, կատարողական արվեստի բնագավառում օժանդակ գործունեություն | 6500 | 2500 | 2000 | 300 | 1000 |
| 8. | Ստեղծագործական գործունեություն | 6500 | 2500 | 2000 | 300 | 1000 |
| 9. | Խնջույքավարների գործունեություն | 15000 | 5000 | 4000 | 600 | 2000 |
| 10. | Կրթական գործունեություն և արտադպրոցական դաստիարակություն մարմնամարզության և սպորտի | 6500 | 2500 | 2000 | 300 | 1000 |

| | | | | | | |
|-----|---|-------|-------|-------|------|------|
| | բնագավառում | | | | | |
| 11. | Մասնավոր տնային տնտեսություններում ծառայությունների մատուցում (առանց տարբերակման) սեփական սպառման համար | 6500 | 2500 | 2000 | 300 | 1000 |
| 12. | Դարբնոցային գործունեություն | 6500 | 2500 | 2000 | 300 | 1000 |
| 13. | Ջրոսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայությունների մատուցում* | 15000 | 10000 | 10000 | 5000 | 5000 |

* Ջրոսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայությունների մատուցման մասով արտոնագրային վճարի հաշվարկման համար հիմք է ընդունվում զբոսաշրջային տան սենյակների քանակը:

(հավելվածը խմբ., լրաց., փոփ. 22.06.12 ՀՕ-166-Ն, խմբ. 19.12.12 ՀՕ-243-Ն)

Հավելված N 2
«Արտոնագրային վճարների մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

Ց Ա Ն Կ

ԱՆՀԱՏ ԶԵՆՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԶԱՓԵՐԻ
(հավելվածն ուժը կորցրել է 19.12.12 ՀՕ-243-Ն)

Հավելված N 3
«Արտոնագրային վճարների մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

| ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ արտոնագրային վճար վճարող համարվելու մասին | | Փաստաթղթի հերթական համարը <small>(լրացվում է հարկային մարմնի կողմից)</small> | | | | |
|--|----------------------------------|--|--------|-------------------------------|--|--|
| 1. Ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) անունը և ազգանունը | | | | | | |
| 2. Ֆիզիկական անձի անձնագրային տվյալները (սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել) | | | | | | |
| 3. Ֆիզիկական անձի սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում) | | | | | | |
| 4. Անհատ ձեռնարկատիրոջ հարկ վճարողի հաշվառման համարը | | | | | | |
| 5. Գտնվելու (բնակության) վայրը | | | | | | |
| Ցանկանում եմ իրականացնել գործունեության հետևյալ տեսակը (տեսակները) | Գործունեության իրականացման վայրը | Գործունեության իրականացման ժամանակահատվածի | | Արտոնագրային վճարի չափը, դրամ | | |
| | | սկիզբը | ավարտը | | | |
| 1. Բնակչության պատվերով կատարվող՝ | | | | | | |
| 1.1. կոշիկի և կաշվե գալանտերեայի և համանման այլ արտադրատեսակների արտադրություն, կոշիկի և կաշվե գալանտերեայի պարագաների արտադրություն, կոշիկի և կաշվե արտադրատեսակների նորոգում | | | | | | |
| հագուստի արտադրություն և նորոգում | | | | | | |
| զվխարկների արտադրություն և նորոգում | | | | | | |
| գորգերի և գորգագործական արտադրատեսակների արտադրություն և նորոգում | | | | | | |
| փայտյա իրերի պատրաստում, կահույքի և տան կահավորանքի նորոգում | | | | | | |

| | | | | |
|---|--|--|--|--|
| ոչ թանկարժեք զարդերի արտադրություն և նորոգում | | | | |
| համակարգչային տեխնիկայի, հեռուստացույցների, լվացքի մեքենաների, օդորակիչների և այլ կենցաղային տեխնիկայի նորոգում, ծրագրային սպասարկում | | | | |
| հեծանիվների և հաշմանդամների սայլակների արտադրություն, անձնական օգտագործման և կենցաղային այլ արտադրատեսակների նորոգում | | | | |
| տնտեսական և գեղազարդ խեցեգործական արտադրատեսակների արտադրություն | | | | |
| այլ ճենապակե և խեցեգործական արտադրատեսակների արտադրություն | | | | |
| թիթեղագործական գործունեություն | | | | |
| 2. Ժամացույցների, ժամանակաչափ սարքերի նորոգում, երաժշտական գործիքների նորոգում | | | | |
| 3. Նեղ մասնագիտական գիտելիքների ձեռքբերման այլ դասընթացներ | | | | |
| 4. Լեզուների ուսուցման դասընթացներ | | | | |
| 5. Բարձրագույն և այլ հաստատություններ ընդունվելու համար նախապատրաստական դասընթացներ | | | | |
| 6. Պարեր, երգեցողություն դասավանդողների գործունեություն | | | | |
| 7. Կատարողական արվեստի բնագավառում գործունեություն, կատարողական արվեստի բնագավառում օժանդակ գործունեություն | | | | |
| 8. Ստեղծագործական գործունեություն | | | | |
| 9. Խնջույքավարների գործունեություն | | | | |
| 10. Կրթական գործունեություն և արտադպրոցական դաստիարակություն մարմնամարզության և սպորտի բնագավառում | | | | |
| 11. Մասնավոր տնային տնտեսություններում ծառայությունների մատուցում (առանց տարբերակման) սեփական սպառման համար | | | | |
| 12. Ղարբնոցային գործունեություն | | | | |
| 13. Ջրոսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայությունների մատուցում | | | | |

Սույնով հայտարարում եմ, որ՝

- 1) նախորդ տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների (բացառությամբ որպես վարձու աշխատող կատարած աշխատանքների), ինչպես նաև վարձավճարների իրացման շրջանառության ընդհանուր գումարը (առանց ԱԱՀ-ի) չի գերազանցել 9,0 մլն դրամը.
- 2) գործունեության իրականացման համար չեմ օգտագործում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այլ ֆիզիկական անձանց աշխատանքը.
- 3) չեմ հանդիսանում համատեղ գործունեության պայմանագրի (բացառությամբ գյուղատնտեսական

արտադրանքի արտադրության) կողմ.

4) գործունեությունը (բացառությամբ իր բնույթով պայմանավորված իրականացման մշտական վայր չունեցող գործունեության տեսակների) չի իրականացվում մեկից ավելի վայրերում.

5) դիմում-հայտարարություն ներկայացնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հանդեպ չունեն 100 հազար և ավելի դրամը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ (այդ թվում՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարը)

Ֆիզիկական անձ

(անհատ ձեռնարկատեր)

ստորագրությունը, անունը, ազգանունը

Հայտարարության ներկայացման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը _____

20__թ.

(լրացվում է հարկային տեսչության կողմից)

(հավելվածը խմբ., լրաց. 22.06.12 ՀՕ-166-Ն, խմբ. 19.12.12 ՀՕ-243-Ն)

Հավելված N 4

«Արտոնագրային վճարների մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

(հավելվածն ուժը կորցրել է 19.12.12 ՀՕ-243-Ն)

Հավելված N 5

«Արտոնագրային վճարների մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտե

Ա Ր Տ Ո Ն Ա Պ Ի Ր Ն _____

20__թ.

Սույն արտոնագիրը տրվում է _____

(Ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

հարկային մարմնում հաշվառված _____ ՀՎՀՀ

20__թ.

և հավաստում է այն մասին, որ նա 20__թ. ընթացքում հանդիսանում է արտոնագրային վճար վճարող:

| Գործունեության տեսակը (տեսակները) | Գործունեության իրականացման վայրը | Գործունեության իրականացման ժամանակահատվածի սկիզբը (ամիս) ավարտը (ամիս) | | Արտոնագրային վճարի չափը, դրամ |
|-----------------------------------|----------------------------------|--|--|-------------------------------|
| | | | | |
| | | | | |
| | | | | |

Հարկային տեսչության պետ _____

(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

Կ.Տ.

(հավելվածը խմբ., լրաց. 22.06.12 ՀՕ-166-Ն, խմբ. 19.12.12 ՀՕ-243-Ն)

(հավելվածն ուժը կորցրել է 19.12.12 ՀՕ-243-Ն)

ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՈՎ ՀԱՐԿՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ

1. Արտոնագրային վճարով հարկվող գործունեության տեսակներն են՝
 - 1) հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը.
 - 2) *(ենթակետն ուժը կորցրել է 19.12.12 ՀՕ-243-Ն)*
 - 3) թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրումը.
 - 4) վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեությունը.
 - 5) ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեությունը.
 - 6) ավտոկանգառների գործունեությունը.
 - 7) բիլիարդ խաղի կազմակերպումը.
 - 8) սեղանի թենիս խաղի կազմակերպումը.
 - 9) մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով սննդի առևտրի կազմակերպման գործունեությունը.
 - 10) մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով խաղերի կազմակերպման գործունեությունը (բացառությամբ շահումով խաղերի և խաղատների գործունեության).
 - 11) ատամնաբուժական գործունեությունը.
 - 12) ատամնատեխնիկական գործունեությունը.
 - 13) անշարժ գույքի առքուվաճառքի կամ վարձակալության միջնորդային գործունեությունը.
 - 14) առևտրի իրականացման վայրերում (ոսկու շուկաներ) վաճառատեղանների կամ վաճառակետերի միջոցով թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի կամ թանկարժեք քարերի առքուվաճառքի գործունեությունը՝ տարեկան մինչև 115 մլն դրամ իրացման շրջանառությամբ:
- (1-ին կետը լրաց. 19.06.15 ՀՕ-67-Ն)*
2. Սույն հավելվածի իմաստով՝
 - 1) հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեություն է համարվում խոհարարական արտադրանքի սպառման կազմակերպումը.
 - 2) *(ենթակետն ուժը կորցրել է 19.12.12 ՀՕ-243-Ն)*
 - 3) թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում է համարվում թեթև մարդատար-տաքսի ավտոմոբիլով իրականացվող ուղևորափոխադրումը, այդ թվում՝ ըստ նախնական պատվերով, ինչպես նաև ըստ նախնական պատվերի համապատասխան պայմանագրերի համաձայն իրականացվող ուղևորափոխադրումը.
 - 4) վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեություն է համարվում վարսավիրանոցներում (գեղեցկության սրահներում) վարսավիրական ծառայությունների մատուցումը: Վարսավիրանոց (գեղեցկության սրահ) է համարվում վարսավիրական ծառայության, դիմահարդարման, դեմքի մերսման, մատնահարդարման և (կամ) նման այլ ծառայության աշխատատեղի (աշխատատեղերի) համար առանձնացված մշտական կամ ժամանակավոր շինությունը.
 - 5) ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեություն է համարվում ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) միջոցով ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկումը: Ավտոտեխսպասարկման կայան (կետ) է համարվում ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման համար հարմարեցված աշխատատեղի (աշխատատեղերի) համար առանձնացված մշտական կամ ժամանակավոր շինությունը: Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում են համարվում ավտոմեքենաների մեխանիկական և էլեկտրական սարքավորանքի, թափքի, ներարկման համակարգի, շարժիչի տեխնիկական սպասարկումը և նորոգումը, ավտոմեքենաների լվացումը, փայլեցումը, ներկումը կամ ներկերի փոշեցրումը, լուսամուտների և հողմապակիների, նստատեղերի նորոգումը, դողերի և օդախցիկների նորոգումը, տեղադրումը, փոխարինումը, հակաքայքայիչ մշակումը, ավտոմեքենաների մասերի և պարագաների տեղադրումը, եթե դա արտադրական գործընթացի փուլ չէ.
 - 6) ավտոկանգառների գործունեություն է համարվում ավտոկանգառում հատուցման դիմաց ավտոտրանսպորտային միջոցի ժամանակավոր կայանման ապահովումը (կազմակերպումը):

Ավտոկանգառ է համարվում ավտոտրանսպորտային միջոցների ժամանակավոր կայանման համար առանձնացված տարածքը.

7) սեղանի թենիս խաղի կազմակերպման գործունեություն է համարվում ժամանցի անցկացման համար սեղանի թենիս խաղի կազմակերպման գործունեությունը.

8) մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով սննդի առևտրի կազմակերպման գործունեություն է համարվում մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով պատրաստի սննդի (սուրճի, գազավորված ըմպելիքների և այլն) առևտուրը.

9) մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով խաղերի կազմակերպման գործունեություն է համարվում զվարճությունների, հանգստի կազմակերպման և այլ վայրերում մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով խաղերի կազմակերպման գործունեությունը.

10) ատամնաբուժական գործունեություն է համարվում ատամնաբուժական պոլիկլինիկաների, կենտրոնների կամ կաբինետների կողմից իրականացվող թերապևտիկ, վիրաբուժական, օրթոպեդիկ, ռենտգենաբանական բժշկական օգնության և սպասարկման գործունեությունը.

11) ատամնատեխնիկական գործունեություն է համարվում ատամնատեխնիկական պարագաների պատրաստումը.

12) անշարժ գույքի առքուվաճառքի կամ վարձակալության միջնորդային գործունեություն է համարվում անշարժ գույքի առքուվաճառքի և (կամ) վարձակալության հանձնման միջնորդական գործունեությունը:

(հավելվածը լրաց. 07.12.11 ՀՕ-314-Ն, փոփ., լրաց. 19.12.12 ՀՕ-243-Ն, լրաց. 19.06.15 ՀՕ-67-Ն)

Հավելված N 8
«Արտոնագրային վճարների մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՈՒ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 7 հավելվածով (այսուհետ Օրենքի N 7 հավելված) սահմանված գործունեության տեսակներ իրականացնող անհատ ձեռնարկատերերը և իրավաբանական անձինք տվյալ գործունեության տեսակների մասով համարվում են արտոնագրային վճար վճարող (այսուհետ՝ արտոնագրային վճար վճարող), իսկ առևտրի իրականացման վայրերում (ոսկու շուկաներ) վաճառասեղանների կամ վաճառակետերի միջոցով թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի կամ թանկարժեք քարերի՝ տարեկան մինչև 115 մլն դրամ իրացման շրջանառությամբ առքուվաճառքի գործունեություն իրականացնողները՝ համապատասխան հայտարարության առկայության դեպքում:

Անհատ ձեռնարկատերերը կամ իրավաբանական անձինք համարվում են արտոնագրային վճար վճարող նաև այն դեպքերում, երբ հանրային սննդի ոլորտում գործունեությունն իրականացվում է այլ անձանց կողմից՝ առանց այդ սրահի (սրահների) մասով անշարժ գույքի հետ կապված իրավունքների՝ օրենքով սահմանված կարգով գրանցման (առանց պետական գրանցման): Օրենքով սահմանված կարգով վարձակալած (անշարժ գույքի հետ կապված իրավունքները ձևակերպած) հանրային սննդի սպասարկման սրահում հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու դեպքում արտոնագրային վճար վճարողներ են համարվում վարձակալները:

(1-ին կետը լրաց. 19.06.15 ՀՕ-67-Ն)

2. (կետն ուժը կորցրել է 19.12.12 ՀՕ-243-Ն)

3. Արտոնագրային վճարի հարկման օբյեկտ են համարվում Օրենքի N 7 հավելվածով սահմանված գործունեության տեսակները, բացառությամբ սույն հավելվածի 4-րդ կետով սահմանված դեպքերի:

4. Արտոնագրային վճարի օբյեկտ չեն համարվում՝

1) հանրակրթական դպրոցներում, պրոֆտեխնիկական ուսումնարաններում, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում հանրային սննդի գործունեությունը.

1.1) հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը, եթե այդ գործունեությունը կազմակերպվում է 600մ² գերազանցող սպասարկման սրահի մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտում.

2) գրոսաշրջության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի սահմանած չափանիշներին համապատասխանող հյուրանոցային տնտեսության օբյեկտներում Օրենքի N 7 հավելվածի 1-ին կետի 1-ին, 4-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթակետերով սահմանված գործունեության տեսակները.

3) **(ենթակետն ուժը կորցրել է 19.12.12 ՀՕ-243-Ն)**

4) թեթև մարդատար մեքենայով բացառապես սեփական ներարտադրական (ներտնտեսական) ուղևորափոխադրումը.

5) այն ավտոկանգառների գործունեությունը, որտեղ տեղադրված են ավտոտրանսպորտային միջոցների էլքն ու մուտքը գրանցող համակարգեր.

6) համայնքի ավագանու որոշմամբ համայնքի սեփականությունը հանդիսացող տարածքներում կազմակերպվող ավտոկանգառների գործունեությունը:

(4-րդ կետը լրաց., փոփ. 19.12.12 ՀՕ-243-Ն)

5. Արտոնագրային վճար վճարողները մինչև գործունեություն իրականացնելը, իսկ գործունեության տվյալ տեսակի համար համապատասխան արտոնագիր ունեցող անձինք՝ մինչև նախկին արտոնագրով նախատեսված ժամանակահատվածից հետո գործունեության տվյալ տեսակը շարունակելը որևէ ժամանակահատվածի (օրացուցային տարվա ընթացքում ընտրված ցանկացած ամիս կամ հաջորդական ամիսների հանրագումար, բայց ոչ ավելի, քան մինչև տվյալ օրացուցային տարվա ավարտը) համար իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում սույն հավելվածի N 1 ձևով սահմանված հայտարարություն, որտեղ նշում են՝

1) արտոնագրային վճար վճարողի՝

ա. իրավաբանական անձի անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը, բ. հարկ վճարողի հաշվառման համարը (այսուհետ՝ ՀՎՀՀ).

2) արտոնագրային վճարով հարկվող գործունեություն իրականացնելու ժամանակահատվածը.

3) յուրաքանչյուր գործունեության իրականացման տեսակը և գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրը:

Սույն հավելվածի իմաստով ժամանակահատվածները հաշվարկելիս ժամանակահատվածի սկզբի օրվա և վերջի օրվա ամսաթվերը ներառող ամիսները ընդունվում են որպես ամբողջական ամիսներ:

Այն դեպքերում, երբ հանրային սննդի ոլորտում գործունեությունն իրականացվում է հանդիսությունների, արարողությունների կամ համանման այլ միջոցառումների կազմակերպման համար նախատեսված՝ 100 մ² և ավելի մակերես ունեցող սրահում, և հանրային սննդի գործունեության իրականացման տվյալ վայրի սրահների ընդհանուր մակերեսը չի գերազանցում 600 մ²-ը, հանդիսությունների, արարողությունների կամ համանման այլ միջոցառումների կազմակերպման համար նախատեսված այդ սրահի մասով արտոնագիր տրամադրվում է սույն հավելվածով սահմանված կարգով՝ տվյալ տարվա որևէ ամսվա կոնկրետ օրվա կամ օրերի համար: Ընդ որում, սույն պարբերությամբ նախատեսված կարգով արտոնագիր ստանալու համար արտոնագրային վճար վճարող համարելու մասին հայտարարությունը կարող է ներկայացվել անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի նախընտրած՝ արտոնագրային վճար վճարող համարվելու որևէ օրվան կամ օրերին նախորդող ցանկացած աշխատանքային օրվա ընթացքում:

(5-րդ կետը փոփ., լրաց. 22.06.12 ՀՕ-166-Ն, լրաց., փոփ. 19.12.12 ՀՕ-243-Ն)

6. Հայտարարություն ներկայացնելու օրն անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձը ստանում է արտոնագիր սույն հավելվածի N 2 ձևին համապատասխան: Ընդ որում, հայտարարությունը ներկայացնելու օրվա ընթացքում սույն հավելվածի N 2 ձևով արտոնագիր չտրամադրելու դեպքում արտոնագիրը համարվում է տրամադրված հայտարարությունը ներկայացնելու օրը, եթե անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձը, սույն հավելվածի 16-րդ կետին համապատասխան, կատարել է արտոնագրային վճարի վճարում, բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքերի:

Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ արտոնագրային վճարից ազատված գործունեության մասով արտոնագիրը տրամադրվում է սույն կետով սահմանված կարգով՝ առանց արտոնագրային վճարի վճարման:

(6-րդ կետը լրաց. 22.06.12 ՀՕ-166-Ն, 19.11.14 ՀՕ-188-Ն)

7. Յուրաքանչյուր գործունեության տեսակի մասով յուրաքանչյուր ժամանակահատվածի և յուրաքանչյուր գործունեության իրականացման վայրի համար տրվում է առանձին արտոնագիր:

(7-րդ կետը փոփ. 22.06.12 ՀՕ-166-Ն)

8. Որևէ ժամանակահատվածի համար տվյալ գործունեության իրականացման վայրի մասով արտոնագիր ստացած արտոնագրային վճար վճարողի կողմից տվյալ գործունեության

իրականացման վայրի մասով ելակետային տվյալի ավելացման դեպքում մինչև ելակետային տվյալի ավելացումը ներկայացվում է հայտարարություն նոր արտոնագիր ստանալու համար: Տվյալ դեպքում վճարվում է լրացուցիչ արտոնագրային վճար՝ ելակետային տվյալի ավելացման ամսաթիվն ընդգրկող ամսվա և մինչև ելակետային տվյալի ավելացումը ստացած արտոնագրի գործողության ավարտն ընկած ամիսների ընդհանուր թվին համապատասխան չափով: Ելակետային տվյալի ավելացման դեպքում տրվում է նոր արտոնագիր սույն հավելվածով սահմանված կարգով՝ ժամանակահատվածի սկիզբ համարելով ելակետային տվյալի ավելացման ամսաթիվն ընդգրկող ամիսը, իսկ ավարտը՝ մինչև ելակետային տվյալի ավելացումը ստացած արտոնագրի գործողության ավարտի ամիսը: Որևէ ժամանակահատվածի համար տվյալ գործունեության իրականացման վայրի մասով ելակետային տվյալը չի կարող նվազեցվել:

(8-րդ կետը փոփ. 22.06.12 ՀՕ-166-Ն, 19.12.12 ՀՕ-243-Ն)

9. Արտոնագրային վճար վճարողները գործունեության արդյունքներից անկախ արտոնագրային վճարը հաշվարկում և վճարում են հետևյալ չափերով՝

| Գործունեության տեսակը | Ելակետային տվյալը | Արտոնագրային վճարի ամսական դրույքաչափը 1 միավորի (դրամ) | | | | |
|---|---|--|---|---|---|---|
| | | Երևան քաղաքում | մարզկենտրոններում | այլ քաղաքներում | այլ վայրերում | սահմանամերձ գյուղերում |
| հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեություն | տարածք, մինչև 20 մ ² ներառյալ | 30000 | 21000 | 21000 | 10500 | 5250 |
| | տարածք, 20-ից մինչև 50 մ ² ներառյալ | 30000 գումարած 20 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 15000 | 21000 գումարած 20 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 10500 | 21000 գումարած 20 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 10500 | 10500 գումարած 20 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 5250 | 5250 գումարած 20 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 2625 |
| | տարածք, 50 մ ² ավելի՝ մինչև 300 մ ² ներառյալ | 75000 գումարած 50 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր. 10 մ ² համար՝ 21000 | 52500 գումարած 50 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 15000 | 52500 գումարած 50 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 15000 | 52500 գումարած 50 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 15000 | 13125 գումարած 50 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 7500 |
| | տարածք, 300 մ ² ավելի՝ մինչև 500 մ ² ներառյալ | 600000 գումարած 300 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 12000 | 427500 գումարած 300 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 8000 | 427500 գումարած 300 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 8000 | 427500 գումարած 300 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 8000 | 200625 գումարած 300 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 4000 |
| | տարածք, 500 մ ² մակերեսից ավելի | 840000 գումարած 500 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 6000 | 587500 գումարած 500 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 3500 | 587500 գումարած 500 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 3500 | 587500 գումարած 500 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 3500 | 280625 գումարած 500 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար՝ 1750 |
| թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում | մեքենայի քանակ | 9500 | 5600 | 5600 | 2800 | 1400 |
| վարսավիրական ծառայությունների | աշխատատեղ | 15000 | 12000 | 9000 | 4500 | 2250 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|--|---|
| մատուցման գործունեություն | | | | | | |
| ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեություն | աշխատատեղ | 15000 | 12000 | 12000 | 6000 | 3000 |
| ավտոկանգառների գործունեություն | տարածք | 600 | 120 | 120 | 60 | 30 |
| բիլիարդ խաղի կազմակերպում | խաղասեղան | 40000 | 20000 | 20000 | 10000 | 5000 |
| սեղանի թենիս խաղի կազմակերպումը | խաղասեղան | 10000 | 7000 | 6000 | 5000 | 1000 |
| մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով սննդի առևտրի կազմակերպումը | ավտոմատ | 5000 | 4000 | 3000 | 2000 | 1000 |
| մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով խաղերի կազմակերպումը | ավտոմատ | 5000 | 4000 | 3000 | 2000 | 1000 |
| ատամնաբուժական գործունեություն | բազկաթոռ, մինչև երեքը ներառյալ | յուրաքանչյուր բազկաթոռի համար 80000 | յուրաքանչյուր բազկաթոռի համար 57000 | յուրաքանչյուր բազկաթոռի համար 57000 | յուրաքանչյուր բազկաթոռի համար 28500 | յուրաքանչյուր բազկաթոռի համար 14000 |
| | բազկաթոռ, երեքը գերազանցող | 240000 գումարած երեք բազկաթոռը գերազանցող յուրաքանչյուր բազկաթոռի համար 48000 | 171000 գումարած երեք բազկաթոռը գերազանցող յուրաքանչյուր բազկաթոռի համար 34000 | 171000 գումարած երեք բազկաթոռը գերազանցող յուրաքանչյուր բազկաթոռի համար 34000 | 85500 գումարած երեք բազկաթոռը գերազանցող յուրաքանչյուր բազկաթոռի համար 17000 | 42000 գումարած երեք բազկաթոռը գերազանցող յուրաքանչյուր բազկաթոռի համար 8400 |
| ատամնատեխնիկական գործունեություն | աշխատատեղ, մինչև երեքը ներառյալ | յուրաքանչյուր աշխատատեղի համար 80000 | յուրաքանչյուր աշխատատեղի համար 57000 | յուրաքանչյուր աշխատատեղի համար 57000 | յուրաքանչյուր աշխատատեղի համար 28500 | յուրաքանչյուր աշխատատեղի համար 14000 |
| | աշխատատեղ, երեքը գերազանցող | 240000 գումարած երեք աշխատատեղը գերազանցող յուրաքանչյուր աշխատատեղի համար 48000 | 171000 գումարած երեք աշխատատեղը գերազանցող յուրաքանչյուր աշխատատեղի համար 34000 | 171000 գումարած երեք աշխատատեղը գերազանցող յուրաքանչյուր աշխատատեղի համար 34000 | 85500 գումարած երեք աշխատատեղը գերազանցող յուրաքանչյուր աշխատատեղի համար 17000 | 42000 գումարած երեք աշխատատեղը գերազանցող յուրաքանչյուր աշխատատեղի համար 8400 |
| անշարժ գույքի առքուվաճառքի կամ վարձակալության միջնորդային գործունեություն | աշխատողների թիվ | 60000 | 50000 | 45000 | 40000 | 10000 |
| առևտրի իրականացման վայրերում (ոսկու շուկաներ) վաճառասեղանների կամ | վաճառասեղան կամ վաճառակետ մինչև 0.5 մ ² ներառյալ | 35000 գումարած 0.5 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր | 25000 գումարած 0.5 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 0.1 մ ² համար` 5000 | 20000 գումարած 0.5 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր | 15000 գումարած 0.5 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր | 0 |

| | | | | | |
|---|--------------------------------------|--|--------------------------------------|--------------------------------------|--|
| <p>վաճառակետերի միջոցով թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի կամ թանկարժեք քարերի առքուվաճառքի գործունեություն՝ տարեկան մինչև 115 մլն դրամ իրացման շրջանառությամբ</p> | <p>0.1 մ² համար՝ 7000</p> | | <p>0.1 մ² համար՝ 4000</p> | <p>0.1 մ² համար՝ 3000</p> | |
|---|--------------------------------------|--|--------------------------------------|--------------------------------------|--|

(9-րդ կետը խմբ. 22.06.12 ՀՕ-166-Ն, փոփ., լրաց. 19.12.12 ՀՕ-243-Ն, լրաց. 19.06.15 ՀՕ-67-Ս)

10. Գործունեության յուրաքանչյուր տեսակի (բացառությամբ հանրային սննդի ոլորտում իրականացվող ատամնաբուժական և ատամնատեխնիկական գործունեության տեսակների) մասով արտոնագրային վճարի մեկամսյա չափերը որոշվում են մեկ միավորի արտոնագրային վճարի մեկամսյա դրույքաչափի և ելակետային տվյալի մեծության, իսկ սույն հավելվածով գործակից սահմանված լինելու դեպքում՝ նաև գործակցի արտադրյալով: Հանրային սննդի ոլորտում իրականացվող ատամնաբուժական և ատամնատեխնիկական գործունեության տեսակների գործունեության մասով արտոնագրային վճարի մեկամսյա չափը որոշվում է ելակետային տվյալին համապատասխանող մեկամսյա դրույքաչափով, իսկ սույն հավելվածով գործակից սահմանված լինելու դեպքում՝ մեկամսյա դրույքաչափի և գործակիցների արտադրյալով:

(10-րդ կետը փոփ. 22.06.12 ՀՕ-166-Ն, 19.12.12 ՀՕ-243-Ս)

11. Միևնույն ժամանակահատվածում տարբեր բնակավայրերում կամ տարբեր բնակավայրերի միջև նույն թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում իրականացնելու համար կիրառվում է տվյալ բնակավայրի համար սույն հավելվածի 9-րդ կետով սահմանված արտոնագրային վճարի դրույքաչափերից առավելագույնը:

Այն դեպքում, երբ բնակության միևնույն հասցեում գրանցված (հաշվառված) անհատ ձեռնարկատերերը, նրանց ամուսինները, ծնողները, երեխաները, եղբայրները, քույրերը միևնույն թեթև մարդատար մեքենայով իրականացնում են ուղևորափոխադրում, կարող են ստանալ անհատ ձեռնարկատիրոջ անվամբ միայն մեկ արտոնագիր: Ընդ որում, այս դեպքում արտոնագրային վճարի ամսական դրույքաչափը սահմանվում է սույն հավելվածի 9-րդ կետով սահմանված դրույքաչափին ավելացրած յուրաքանչյուր վարորդի համար 1000 դրամ:

Միևնույն ժամանակահատվածում տարբեր բնակավայրերում անշարժ գույքի առքուվաճառքի կամ վարձակալության միջնորդային գործունեություն իրականացնելու դեպքում կիրառվում է տվյալ բնակավայրի համար սույն հավելվածի 9-րդ կետով սահմանված արտոնագրային վճարի դրույքաչափերից առավելագույնը: Անշարժ գույքի առքուվաճառքի կամ վարձակալության միջնորդային գործունեություն իրականացնելու վայր է համարվում այն գրասենյակի գտնվելու վայրը, որտեղ կնքվում են անշարժ գույքի առքուվաճառքի կամ վարձակալության միջնորդային գործունեությանը վերաբերող պայմանագրեր:

(11-րդ կետը լրաց. 22.06.12 ՀՕ-166-Ն, 19.12.12 ՀՕ-243-Ս)

12. Սույն հավելվածի 5-րդ կետով նշված մեկ ամսից ավելի որևէ ժամանակահատվածի համար գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով արտոնագրային վճարի չափը սահմանվում է տվյալ ժամանակահատվածում ներառված ամիսների համար սույն հավելվածով սահմանված կարգով հաշվարկված արտոնագրային վճարի ամսական չափերի հանրագումարի չափով:

Անհատ ձեռնարկատերերի կամ իրավաբանական անձանց կողմից սույն հավելվածի 5-րդ կետի երրորդ պարբերությամբ նախատեսված սրահներում հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու դեպքերում որևէ ամսվա օրվա կամ օրերի համար արտոնագրային վճարի չափը սահմանվում է արտոնագրային վճարի մեկամսյա չափի մեկ երեսուներորդի, գործունեության տվյալ տեսակի համար տվյալ արտոնագրում նշված օրերի քանակի, իսկ տվյալ գործունեությունը Երևան քաղաքում իրականացնելու պարագայում՝ նաև սույն հավելվածի 14-րդ կետի 1.2-րդ կետով սահմանված գործակցի արտադրյալով՝ դրամական արտահայտությամբ:

(12-րդ կետը խմբ. 22.06.12 ՀՕ-166-Ն, խմբ., փոփ. 19.12.12 ՀՕ-243-Ն)

13. Արտոնագրային վճարի հաշվարկման համար հիմք ընդունվող ելակետային տվյալներն են՝

1) հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության համար՝ հանրային սննդի սպասարկման սրահի մակերեսը, որն իր մեջ ներառում է պատրաստի խոհարարական արտադրանքի իրացման և սպառման կազմակերպման համար նախատեսված տարածքը, իսկ բացօթյա վայրերում հանրային սննդի սպասարկման սրահ է համարվում հանրային սննդի գործունեության իրականացման ընդհանուր մակերեսը՝ արտահայտված քառակուսի մետրով.

2) (ենթակետն ուժը կորցրել է 19.12.12 ՀՕ-243-Ն)

3) թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում իրականացնելու համար մեքենաների քանակը.

4) վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեության համար՝ վարսավիրական ծառայության մատուցման աշխատատեղը: Վարսավիրական ծառայության մատուցման աշխատատեղ է համարվում վարսավիրական ծառայության, դիմահարդարման, դեմքի մերսման, մատնահարդարման և (կամ) նման այլ ծառայության համար նախատեսված յուրաքանչյուր տեղ: Վարսավիրական ծառայության մատուցման տարբեր աշխատատեղերը մեկ անձի կողմից համատեղման դեպքում համատեղած աշխատատեղերը համարվում են մեկ աշխատատեղ, իսկ նույնատիպ (միանման) աշխատատեղերի առկայության դեպքում այդ աշխատատեղերը դիտարկվում են որպես առանձին աշխատատեղեր.

5) ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեության համար ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման աշխատատեղը: Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման աշխատատեղ է համարվում ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական սպասարկման տեսակների մեկ ամբողջական գործընթացի ապահովման համար հատուկ սարքավորումներով կահավորված տարածքը: Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման տարբեր աշխատատեղերը մեկ անձի կողմից համատեղման դեպքում համատեղած աշխատատեղերը համարվում են մեկ աշխատատեղ, իսկ նույնատիպ (միանման) աշխատատեղերի առկայության դեպքում այդ աշխատատեղերը դիտարկվում են որպես առանձին աշխատատեղեր.

6) ավտոկանգառների գործունեության համար՝ ավտոտրանսպորտային միջոցների ժամանակավոր կայանման համար առանձնացված ընդհանուր տարածքը՝ արտահայտված քառակուսի մետրով.

7) բիլիարդ խաղի կազմակերպման գործունեության համար՝ խաղասեղանների քանակը.

8) սեղանի թենիս խաղի կազմակերպման գործունեության համար՝ խաղասեղանների քանակը.

9) մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով սննդի առևտրի կազմակերպման գործունեության համար՝ մետաղադրամով շահագործվող ավտոմատների քանակը.

10) մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով խաղերի կազմակերպման գործունեության համար՝ խաղային ավտոմատների քանակը.

11) ատամնաբուժական գործունեության համար՝ ատամնաբուժական ծառայությունների մատուցման համար նախատեսված բազկաթռռների թիվը.

12) ատամնատեխնիկական գործունեության համար՝ ատամնատեխնիկական ծառայությունների մատուցման աշխատատեղերի թիվը.

13) անշարժ գույքի առքուվաճառքի կամ վարձակալության միջնորդային գործունեության համար՝ աշխատողների թիվը.

14) առևտրի իրականացման վայրերում (ոսկու շուկաներ) վաճառասեղանների կամ վաճառակետերի միջոցով թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի կամ թանկարժեք քարերի առքուվաճառքի տարեկան մինչև 115 մլն դրամ իրացման շրջանառությամբ գործունեության համար՝ թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի կամ թանկարժեք քարերի ցուցադրման և (կամ) վաճառքի համար օգտագործվող վաճառասեղանների կամ վաճառակետերի մակերեսը՝ արտահայտված քառակուսի մետրերով (մ²):

(13-րդ կետը լրաց. 19.12.12 ՀՕ-243-Ն, 19.06.15 ՀՕ-67-Ն)

14. Արտոնագրային վճարի չափի հաշվարկման գործակիցներն են՝

1) սպառողների սահմանափակ քանակակազմ ունեցող հանրային սննդի գործունեության իրականացման վայրերի (օբյեկտների) համար՝ 0,5.

1.1) ապրիլ, մայիս, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին բացօթյա վայրերի միջոցով կազմակերպվող հանրային սննդի գործունեության համար՝ 0,8.

1.2) Երևան քաղաքում սույն հավելվածի 5-րդ կետի երրորդ պարբերությամբ նախատեսված սրահներում հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու համար՝ 3.0.

2) հեստապար և անհատական կամ համույթային համանման այլ ցուցադրումներ ունեցող հանրային սննդի գործունեության իրականացման վայրերի (օբյեկտների) համար՝ 5,0.

3) Երևան քաղաքում վարսավիրական ծառայությունների մատուցման, ինչպես նաև հանրային սննդի օբյեկտների (բացառությամբ մինչև 50 մ² սպասարկման սրահի մակերես ունեցող օբյեկտների), ավտոտեխսպասարկման կայանների (կետերի), ավտոկանգառների, բիլիարդ խաղի, սեղանի թենիս խաղի, մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով խաղերի, մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով սննդի առևտրի գործունեության կազմակերպման համար՝

առաջին և երկրորդ գոտիների համար՝ 1.4,

մյուս գոտիների համար՝ 1.05:

Երևան քաղաքի բաշխումն ըստ տարածքային գոտիների սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

3.1) Երևան քաղաքում ատամնաբուժական, ատամնատեխնիկական գործունեության իրականացման համար՝

առաջին և երկրորդ գոտիների համար՝ 1.0,

մյուս գոտիների համար՝ 0.75:

Երևան քաղաքի բաշխումը՝ ըստ տարածքային գոտիների, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

4) Աբովյան, Աշտարակ, Վաղարշապատ և Մասիս քաղաքների վարչական սահմաններում գտնվող 500 մ² սպասարկման սրահի մակերեսից ավելի տարածք ունեցող հանրային սննդի օբյեկտների համար՝ 2.0.

5) տոնավաճառների, վերնիսաժների, շուկաների, Երևանի կայարանների (ավտոկայարանների), մետրոպոլիտենի կայարանների կամ դրանց անմիջապես հարող տարածքներում գտնվող ավտոկանգառների գործունեության համար՝ լրացուցիչ 2.5.

6) բացառապես գիշերային ժամերին (ժամը 21:00-ից մինչև ժամը 09:00-ն) աշխատող ավտոկանգառների գործունեության համար՝ լրացուցիչ 0,5.

7) մեկամսյա ժամանակահատվածի համար՝ 1,0: Մեկ ամսից ավելի ժամանակահատվածի համար արտոնագրային վճարի չափը հաշվարկելիս սույն կետով սահմանված գործակիցը նվազեցվում է 0,02-ով՝ արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարությամբ ներկայացված մեկից ավելի յուրաքանչյուր ամսվա համար:

(14-րդ կետը լրաց. 22.06.12 ՀՕ-166-Ն, լրաց., փոփ., խմբ. 19.12.12 ՀՕ-243-Ն)

15. Ընթացիկ տարում արտոնագրային վճար վճարող հանդիսանալուց դադարելու, գործունեությունը դադարեցնելու կամ ժամանակավոր կասեցնելու դեպքերում սույն հավելվածով սահմանված կարգով վճարված արտոնագրային վճարները չեն հաշվանցվում և չեն վերադարձվում (անկախ նրանից, թե որ ժամանակահատվածի համար է վճարվել արտոնագրային վճարը):

16. Արտոնագրային վճար վճարողներն արտոնագրային վճարը վճարում են մինչև արտոնագիր ստանալը:

17. Արտոնագրային վճար վճարողները հարկային հաշիվներ դուրս չեն գրում:

18. Արտոնագրային վճար վճարողները հանդիսանում են հարկային գործակալներ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով և նրանց վրա չի տարածվում «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դրույթը:

19. (կետն ուժը կորցրել է 19.12.12 ՀՕ-243-Ն)

20. Արտոնագրային վճարով հարկվող գործունեության տեսակների մասով շահութահարկի կանխավճարներ չեն կատարվում:

| ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ արտոնագրային վճար վճարող համարվելու մասին | | | | Փաստաթղթի հերթական համարը <small>(լրացվում է հարկային մարմնի կողմից)</small> | | |
|---|----------------------------------|-------------------------------|--------------------------|--|--------|-------------------------------|
| 1. Հարկ վճարողի հաշվառման համարը | | | | | | |
| 2. Իրավաբանական անձի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը) | | | | | | |
| 3. Գտնվելու վայրը | | | | | | |
| 4. Արտոնագրային վճար վճարող համարվելու ժամանակահատվածը | | | | | | |
| Գործունեության տեսակը (տեսակները) | Գործունեության իրականացման վայրը | Ելակետային տվյալի մեծությունը | Գործակիցը (գործակիցները) | Գործունեության ժամանակահատվածի | | Արտոնագրային վճարի չափը, դրամ |
| | | | | սկիզբը | ավարտը | |
| 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |

Թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում իրականացնելու դեպքում՝ թեթև մարդատար ավտոմեքենաների պետհամարանիշները

| | | | | |
|--|--|--|--|--|
| | | | | |
| | | | | |
| | | | | |

Օրենքի N 8 հավելվածի 5-րդ կետով սահմանված դեպքում՝ հանդիսությունների, արարողությունների կամ համանման այլ միջոցառումների համար նախատեսված սրահներում իրականացվող հանրային սննդի գործունեության համար հայտարարության 4-րդ կետում նշված ամսվա կոնկրետ օրացուցային օրը (օրերը)՝

_____ :
(լրացվում է տվյալ ամսվա ամսաթիվը (ամսաթվերը))

Օրենքի N 8 հավելվածի 11-րդ կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքում անհատ ձեռնարկատերերի հաշվառման հասցեում հաշվառված այլ ֆիզիկական անձանց տվյալները, որոնց համար պետք է կատարվի վճարում.

| | |
|---|-------------------------------------|
| Որպես վարորդ հաշվառված ֆիզիկական անձի անունը, ազգանունը | Հաշվառման հասցեն՝ համաձայն անձնագրի |
| | |
| | |

Հայտարարությանը կից ներկայացնում եմ արտոնագրային վճարի վճարումը հաստատող փաստաթղթի պատճենը:

Կազմակերպության տնօրեն (անհատ ձեռնարկատեր)

_____ ստորագրությունը, անունը, ազգանունը

Հայտարարության ստացման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը _____ 20__ թ.

(լրացվում է հարկային տեսչության կողմից)

(ծեղ փուլի. 22.06.12 ՀՕ-166-Ն, խմբ. 19.12.12 ՀՕ-243-Ն)

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
ԱՐՏՈՆԱԳԻՐ N _____

_____ 20__թ.

Սույն արտոնագիրը տրվում է _____

(իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

հաշվառված _____ 20__թ. ՀՎՀՀ _____

և 20__թ. ընթացքում հանդիսանում է արտոնագրային վճար վճարող

| Գործունեության տեսակը | Գործունեության իրականացման վայրը | Ելակետային տվյալի մեծությունը | Գործունեության իրականացման ժամանակահատվածի | |
|-----------------------|----------------------------------|-------------------------------|--|---------------|
| | | | սկիզբը (ամիս) | ավարտը (ամիս) |
| | | | | |

Թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում իրականացնելու դեպքում՝ թեթև մարդատար ավտոմեքենաների պետհամարանիշները

| | | | | |
|--|--|--|--|--|
| | | | | |
| | | | | |
| | | | | |

Օրենքի N 8 հավելվածի 11-րդ կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքում անհատ ձեռնարկատերերի հաշվառման հասցեում հաշվառված այլ անձանց տվյալները, որոնց համար վճարվում է արտոնագրային վճար.

| Որպես վարորդ հաշվառված ֆիզիկական անձի անունը, ազգանունը | Հաշվառման հասցեն՝ համաձայն անձնագրի |
|---|-------------------------------------|
| | |
| | |

Օրենքի N 8 հավելվածի 5-րդ կետով սահմանված դեպքում՝ հանդիսությունների, արարողությունների կամ համանման այլ միջոցառումների համար նախատեսված սրահներում իրականացվող հանրային սննդի գործունեության համար ամսվա կոնկրետ օրացուցային օրը (օրերը)՝

| | | | | | | | | | |
|--|--|--|--|--|--|--|--|--|--|
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |

Հարկային տեսչության պետ _____
(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

Կ.Տ.

*(ձևը լրաց. 22.06.12 ՀՕ-166-Ն, 19.12.12 ՀՕ-243-Ն)
(հավելվածը լրաց. 07.12.11 ՀՕ-314-Ն, փոփ., լրաց., խմբ. 22.06.12 ՀՕ-166-Ն, 19.12.12 ՀՕ-243-Ն, լրաց. 19.11.14 ՀՕ-188-Ն, 19.06.15 ՀՕ-67-Ն)*